ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.06.2012թ.
175-ի 7

Երևանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գործող Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրում մինչ օրս չի գործում ջեռուցման համակարգ, դպրոցը չունի առանձին կաթսայատուն, դպրոցը, ներառյալ սանհանգույցները գտնվում են ոչ բարվոք վիճակում, ունեն վերանորոգման կարիք:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Նախատեսվու՞մ է արդյոք կառուցել ջեռուցման ընդհանուր համակարգ (կաթսայատուն) Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրում:
2. Եթե այո, ապա խնդրում ենք հայտնել, թե ե՞րբ են իրականացվելու աշխատանքները և ե՞րբ է ջեռուցման ընդհանուր համակարգը (կաթսայատունը) հանձնվելու շահագործման:
3. Նախատեսվու՞մ է արդյոք իրականացնել վերանորոգման աշխատանքներ Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրում:
4. Եթե այո, ապա ինչպիսի՞ աշխատանքներ (մասնակի, ընդհանուր, սանհանգույցների եւ այլն) և ե՞րբ են նախատեսվում կատարել:
5. Նախատեսվու՞մ է արդյոք կրթահամալիրի հին դպրոցական կահույքը (դպրոցական նստարաններ, պահարաններ, գրատախտակներ և այլն) փոխարինել նորով:
6. Եթե այո, ապա ե՞րբ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան